ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 63-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Զարուհի Բաթոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք), 2019 թվականի մարտի 9-14-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
   Մասնակցություն ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 63-րդ նստաշրջանին

6. **Քննարկված թեմաները.**
   ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի աշխատանքային հիմնական թեմաներն են գենդերային հավասարությունը և կանանց հզորացումը, առաջխաղացումը: Այցի շրջանակներում քննարկվել են նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին, ընտանեկան բռնության զոհերի պաշտպանությանը, կանանց և աղջիկների սոցիալական պաշտպանությանն առնչվող հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Հայաստանի պատվիրակությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զ. Բաթոյանի գլխավորությամբ մասնակցեց ՄԱԿ-ում Կանանց

կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 63-րդ նստաշրջանի բացմանը, նախարարական քննարկումներին և հարակից այլ միջոցառումներին:

Զ. Բաթոյանը ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 63-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկմանը հանդես եկավ ելույթով, որի տեսագրությունը հասանելի է UN Web TV կայքում, իսկ հայերեն թարգմանությամբ տեքստային տարբերակը՝ mlsa.am կայքում: Ելույթում անդրադարձ կատարվեց կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտությանը Հայաստանի Թավշյա ժողովրդավարական հեղափոխության օրինակով: Ընդգծվեց նաև, որ Հայաստանը հավատարիմ է իր միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին և պատրաստ է համատեղելու ջանքերը ՄԱԿ-ի անդամ մյուս պետությունների հետ կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանության համար աշխարհի բոլոր կողմերում:

ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկացուցչությունը ՄԱԿ-ի կենտրոնակայանում կազմակերպել էր «Հավասար իրավունքներից դեպի հավասար հնարավորություններ. դիմակայելով կանանց և աղջիկների հանդեպ խտրականությանը» հարակից միջոցառումը: Հանդիպմանը բացման խոսքով հանդես եկավ ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Միեր Մարգարյանը: Ելույթներով հանդես եկան Կիպրոսի արտաքին գործերի նախարարի՝ արտաքին քաղաքականության գենդերային հավասարության հարցերով խորհրդական Ջոզի Խրիստոդուլուն, ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի ներառական սոցիալական զարգացման բաժնի տնօրեն Դանիելա Բասը, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գենդերային և մարդու իրավունքների և մշակույթի բաժնի ղեկավար Լուիս Մորան և «NGO CSW/NY» հասարակական կազմակերպության նախագահ Սյուզան Օ'Մալին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանն իր ելույթում շեշտեց, որ Հայաստանի կառավարությունը հանձնառու է աջակցելու գենդերային հավասարությանը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց հնարավորությունների ընդլայնմանն ուղղված համաշխարհային ջանքերին՝ նկատելով, որ կանայք էապես նպաստել են Հայաստանում 2018 թ. գարնանը տեղի ունեցած փոփոխություններին և ապահովել վերջիններիս խաղաղ բնույթը: Այս ելույթը ևս հասանելի է UN Web TV կայքում, իսկ տեքստային տարբերակը անգլերենով տարածվել է սոցիալական ցանցերում:

Այցի շրջանակներում հանդիպում եղավ Էստոնիայի առողջապահության և աշխատանքի նախարար Ռիինա Սիկուտի հետ: Քննարկամն թեմաներն էին ընտանեկան նպաստը, երեխաների աջակցության համակարգերը,

հաշմանդամություն ունեցող անձանց ներառման երկու երկրների քաղաքականությունները:

Տեղի ունեցավ հանդիպում Պորտուգալիայի Հանրապետության Քաղաքացիության և հավասարության պետքարտուղար Ռոզա Մոնտեիրոյի հետ, որի հետ քննարկվեց երկու երկրներում ընտանեկան բռնության դեմ պայքարին ուղղված գործողությունները: Առանձնակի շեշտադրվեցին ընտանեկան բռնության զոհերի պաշտպանությանը և նրանց տրամադրվող ծառայություններին առնչվող հարցերը:

Մարտի 12-ին հայաստանյան պատվիրակությունը մասնակցեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության կազմակերպած նախարարական համաժողովին: Համաժողովը նվիրված էր Ֆրանկոֆոն երկրներում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և աղջիկների դերակատարության բարձրացմանը: Համաժողովի քննարկման կենտրոնում էր Երևանում նախորդ տարի կայացած Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովը և դրա շրջանակներում Երևանում ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասարության, կանանց իրավունքների և առաջխաղացման խթանման մասին» ռազմավարությունը:

Մտքերի փոխանակում տեղի ունեցավ Ֆրանկոֆոնիայի 18-րդ գագաթաժողովը 2020 թվականին հյուրընկալող Թունիսի Կանանց, ընտանիքի, երեխաների և տարեցների հարցերով նախարար Նազիհա Լաաբիդիի հետ:

Պաշտոնական հանդիպում տեղի ունեցավ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր տնօրեն Նատալյա Քանեմի հետ: Հանդիպմանը դոկտոր Քանեմն առանձնացրեց Հայաստանի Հանրապետությունում համագործակցության երեք հիմնական ուղղությունները (գենդերային հիմքով բռնության դեմ պայքար, վերարտադրողական առողջություն և ընտանիքի պլանավորում): Գործադիր տնօրենը հրավիրեց Նայրոբիում կայանալիք համաժողովին, որտեղ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը տոնելու է ստեղծման 50-ամյակը և 1994 թվականին Կահիրեում տեղի ունեցած Բնակչության և զարգացման համաժողովի 25-ամյակը:

Հանդիպում տեղի ունեցավ UN Women («ՄԱԿ Կանայք») կառույցի գործադիր տնօրեն Ֆումզիլե Մլամբո-Նգկուկայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին հայաստանցի կանանց իրավունքների ապահովման նպատակով համագործակցության և ամբողջ աշխարհում կանանց և աղջիկների համար ջանքերը միավորելու նոր հնարավորությունները: Հաշվի առնելով այն փաստը, որ հաջորդ տարի լրանում է Կանանց հարցերով համաշխարհային խորհրդաժողովի և Պեկինի հռչակագրի և գործողությունների ծրագրի քսանհինգամյա հոբելյանը՝ դոկտոր Ֆումզիլեի հետ քննարկվեց նաև «Պեկին 25» կոնֆերանսի ներառականության երաշխավորումը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի նստաշրջանի արդյունքում ընդունվում են համաձայնեցված եզրակացություններ և բանաձևեր: 63-րդ նստաշրջանի օրակարգով դրանց ընդունում նախատեսված է ս.թ. մարտի 22-ին՝ նստաշրջանի վերջին օրը: Վերոնշյալ փաստաթղթերի շուրջ բանակցությունները վարվում են անդամ պետությունների կողմից՝ ՄԱԿ-ում մշտական ներկայացուցչությունների կամ մայրաքաղաքներից ժամանած փորձագետների մակարդակով: Համաձայնեցված եզրակացությունների շուրջ բանակցությունները համակարգում է նստաշրջանի բյուրոն:

Նստաշրջանի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Մինչև ս.թ. մայիսի 19-ը նախատեսվում է ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Պեկինի հռչակագրի և Գործողությունների հարթակի, ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 23-րդ հատուկ նստաշրջանի արդյունքների իրականացման ազգային զեկույցի տրամադրում: Զեկույցը կազմելու գործընթացում կարևորվում է պետական գերատեսչությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, միջազգային գործընկերների ակտիվ ներգրավվածությունը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԶԱՐՈՒՀԻ

X _____

ԲԱԹՈՅԱՆ

18.03.2019 թ.